

Շախմատի տարօրինակ մրցույթ

Ժամանակի սահմանափակում՝ 2 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 256 MB
Կշիռը՝ 100 միավոր

Շարադրանք

Կարենը և իր ընկերները (ընդհանուր n հոգի) սիրում են շախմատ խաղալ: Նրանք փորձում են կազմակերպել այնպիսի մրցույթ, որտեղ i ռոմանակիցը կխաղա ճիշտ $a[i] \geq 1$ խաղ: Նրանք ցանկանում են մրցույթը կազմակերպել նախօրոք մտածված 3 ձևաչափերից մեկով.

- Յուրաքանչյուր խաղին կարող են խաղալ երկու կամայական մասնակից: Այլ կերպ ասած՝ խաղացողների նույն զույգը կարող է խաղալ կամայական քանակի անգամ, և յուրաքանչյուր մասնակիցը կարող է խաղալ ինքն իր դեմ՝ կամայական քանակի անգամ (այո, նրանք շատ տարօրինակ են): **Երբ մասնակիցը խաղում է ինքն իր դեմ, պետք է համարել, որ նա խաղաց 2 խաղ:**
- Մասնակիցների յուրաքանչյուր զույգ կարող է խաղալ կամայական քանակի անգամ, բայց ոչ մի մասնակից չի կարող խաղալ ինքն իր դեմ:
- Մասնակիցների ոչ մի զույգ չի կարող խաղալ մեկից ավելի անգամ, և ոչ մի մասնակից չի կարող խաղալ ինքն իր դեմ:

Տրված են խաղացողների քանակը, մրցույթի ձևաչափը, և թե մասնակիցներից յուրաքանչյուրը քանի խաղ է ուզում խաղալ: Օգնեք Կարենին կազմակերպել մրցույթը: Գրեք ծրագիր, որը կարտածի խաղացող զույգերի համարները, կամ -1 , եթե հնարավոր չէ այդպիսի մրցույթ կազմակերպել:

Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված է երկու բնական թիվ՝ n և t , որտեղ n ը մասնակիցների քանակն է, իսկ t ն՝ մրցույթի ձևաչափը: Հաջորդ n տողերից i ռոմանակում տրված է $a[i]$ բնական թիվը՝ այն խաղերի քանակը, որը ուզում է խաղալ i ռոմանակիցը: Երաշխավորվում է, որ բոլոր $a[i]$ երի գումարը չի գերազանցում 10^5 ը:

Ելքային տվյալներ

Եթե մրցույթը հնարավոր չէ կազմակերպել, պետք է արտածել -1 : Հակառակ դեպքում պետք է արտածել խաղերի ընդհանուր քանակին հավասար քանակով տողեր: Տողերից յուրաքանչյուրում պետք է լինի 2 թիվ՝ այդ խաղին մասնակցողների համարները: Եթե մրցույթը հնարավոր է կազմակերպել մեկից ավելի ձևերով, պետք է արտածել հնարավոր ձևերից կամայականը: Խաղերը և յուրաքանչյուր խաղի մասնակիցների համարները կարելի է արտածել կամայական հերթականությամբ:

Օրինակ

Մուտք	Ելք
4 1	1 1
8	1 2
3	1 3
2	1 4
1	2 1
	1 1
	3 2

4 2 1 2 3 4	3 4 3 4 3 4 1 2 2 4
4 3 1 2 3 4	-1

Ենթախնդիրներ

- Ենթախնդիր 0 (**0 միավոր**) Օրինակները,
- Ենթախնդիր 1 (**22 միավոր**) $t = 1$,
- Ենթախնդիր 2 (**33 միավոր**) $t = 2$,
- Ենթախնդիր 3 (**45 միավոր**) $t = 3$: